

ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՐՈՍ Հ. ԴԵՄԻՐՃՅԱՆ

**Բ. գ. դ., ՀՀ ԳԱՄ Մ. Աբեղյանի անվան ԳԻ
առաջատար գիտաշխատող
pdemirchyan@mail.ru, /093/ 63-09-80**

DOI: 10.54503/1829-0116-2023.1-162

ԵՂԻԱ ՏԵՄԻՐՃԻՊԱՇՅԱՆԸ ԺԱՄԱՆԱԿԻ ԳՐԱԿԱՆ ԲԱՆԱՎԵՃԵՐՈՒՄ

Բանալի բառեր՝ Ե. Տեմիրճիպաշյան, Արփ. Արփիարյան, Գր. Չոիրապ, բանավեճ, վաղվան գրականություն, ես-ի գրականություն, անգործություն, «Վերլուծում», «Չարգացում ես-ին»

XIX դարավերջին արևմտահայ գրական կյանքը բնորոշվում էր մի շարք աղմկահարույց բանավեճերով: Գրական, գիտական և լրագրողական միտքը մոտեցող XX դարի նոր ակնկալիքներով աշխույժ քննարկումների դուռ էր բացել, այսպես կոչված, «ես»-ի կամ «ենթակայական» գրականության, նորավեպի, «վաղվան գրականության», հին ու նոր գրական լեզուների առաջնայնության և այլ հիմնահարցերի շուրջ: Բանավեճերին մասնակցում էին ժամանակի արևմտահայ ճանաչված գրողներից ու լրագրողներից շատերը: Ամենաակտիվներից մեկը բանաստեղծ, արձակագիր, իմաստասեր, խմբագիր Եղիա Տեմիրճիպաշյանն էր, ում անունը հնչում էր գրեթե բոլոր հրապարակումներում: Պատճառը, մասնավորապես, նոր դարի շեմին գրական սերնդափոխության երևույթով պայմանավորված, ավագների կամ նախկին հեղինակությունների նկատմամբ դրսևորվող անհանդուրժողական վերաբերմունքն էր, որին ավագները ստիպված էին հակադարձել հիմնավոր առարկություններով: Այդ իմաստով 1893-ի սկիզբը այնքան էլ բարենպաստ չէր Ե. Տեմիրճիպաշյանի համար: Մարտ ամսին մեծ բանավեճ էր հրահրվել Նրա հետ՝ «ես»-ի գրականության հարցի շուրջ: Բանավեճն սկսվել էր Կ. Պոլսի «Հայրենիք» օրաթերթի «Ես-ը» վերնագիրը կրող խմբագրականով, որի հեղինակը խմբագիր Արփիար Արփիարյանն էր: Ռեալիստական գրականության դիրքերից հանդես եկող Արփիարյանի համար անձնական կամ «ես»-ի գրա-

կանությունը, իհարկե, մերժելի էր, և նա այդ ուղղության գրողներին մեղադրում էր «եսամոլության» մեջ: Արփիարյանի հոդվածին Ե. Տեմիրճիպաշյանը պատասխանում է «Չարգացումն «եսին» վերլուծական գրությամբ՝ ցույց տալով, որ հիշյալ ուղղությունը նորություն չէ, շատ ավելի խոր պատմական արմատներ ունի և ներկա դարում Գյոթեից սկսած, նոր զարգացում է ապրել: Նրա եզրահանգումն այն էր, թե «Ինքն իր մեջ նայելով է, որ մարդս ուրիշին մեջ նայիլ կուսանի»:

Դարավերջին բորբոքված «վաղվան գրականության» շուրջ բանավեճում ևս գլխավոր թիրախներից մեկը դարձյալ եղիա Տեմիրճիպաշյանն էր: Պատասխանելով նորերի կողմից հանդես եկող հոդվածագիրների /Ա. Անտոնյան, Հովհ. Գազանճյան, Արտ. Հարությունյան և այլք/՝ նոր ժամանակի մեջ իր գործունեությանը տրվող աննպաստ գնահատականներին, «Գրամարտ» վերնագրված հոդվածում նա կոչ էր անում չխեղաթյուրել իրականությունը, քանի որ ճիշտ ու արդարացի «գնահատումը գործունեության եթե ոչ անհրաժեշտ, այլ գոնե մեծ պայման մըն է»:

Петрос А. Демирчян

*Докт. фил. наук, Ведущий научный сотрудник отдела
армянской новой литературы Института литературы
имени М. Абегамян НАН РА.*

pdemirchyan@mail.ru, /093/ 63-09-80

ЕГИЯ ТЕМИРЧИПАШЯН В ЛИТЕРАТУРНЫХ ДИСКУССИЯХ СВОЕГО ВРЕМЕНИ

Ключевые слова: Е. Темирчипашян, Арп. Арпиарян, Гр. Зограп, дискуссия, литература завтрашнего дня, литература своего «я», безделье, «Анализ», «Развитие своего «я».

В конце XIX века западноармянская литературная жизнь характеризовалась чередой шумных дискуссий. Литературная, научная и публицистическая мысль - с новыми ожиданиями приближающегося XX века - открыла двери для оживленных дискуссий вокруг литературы личностной или так называемой своего «я», новеллы, «литературы завтрашнего дня», первенстве старой и новой литературных языков и других проблем. В них участвовали многие известные западноармянские писатели и журналисты того времени. Одним из самых активных был Егия Темирчипашян, - поэт, прозаик, философ и редактор, - чье имя фигурировало почти во всех публикациях. Причиной, - в частности, связанного с явлением литературной

смены поколений на пороге нового века,- было нетерпимое отношение к старшим или прежним авторитетам, которому последние должны были противопоставить обоснованные возражения. В этом смысле начало 1893 года было не очень благоприятным для Е.Темирчипашяна. В марте с ним разгорелась большая дискуссия по вопросу о литературе своего «я». Она началась с редакционной статьей под названием «Я» стамбульской газеты «Айреник», автором которой был сам редактор Арпиар Арпиарян. Для Арпиаряна, выступающего за реалистическую литературу, литература своего «я» была, конечно, неприемлема, и он обвинял писателей этого направления в «эгоизме». Выступлению Арпиаряна Темирчипашян ответил аналитической статьей с названием «Анализ», показывая, что указанное направление не ново, имеет гораздо более глубокие исторические корни и пережило новое развитие в нынешнем столетии, начиная с Гёте. Его вывод заключался в следующем: «Именно заглянув в себя, человек может научиться заглянуть в кого-то другого».

Егия Темирчипашян в очередной раз стал одной из главных мишеней дискуссий о «литературе завтрашнего дня», бушевавших в конце века. Отвечая авторам выступающих на стороне нового поколения /А. Антонян, Ов. Газанчян, Арт. Арутюнян и др./, в статье «Грамарт» /«Литературное сражение»/ призвал не искажать действительность, ибо правильная и справедливая оценка деятельности писателя является если не необходимым, то, по крайней мере, важным условием.

PETROS H. DEMIRCHYAN:

Doctor of Philological Sciences.

Leading researcher of the department of New Armenian Literature of the

Institute of Literature after M. Abeghyan

of National Academy of Sciences of the Republic of Armenia.

pdemirchyan@mail.ru, /093/ 63-09-80

YEGHIA TEMIRCHIPASHYAN IN LITERARY DISCUSSION OF THE TIME

Key words: Ye. Temirchipashyan, Arp. Arpiaryan, Gr. Zohrap, discussion, literature of tomorrow, literature of my "self", idleness, «Analysis», «Development of one's "self"»

At the end of the 19th century, Western Armenian literary life was characterized by a series of noisy discussions. Literary, scientific and journalistic thought, with the new expectations of the approaching 20th century, opened the

door to lively discussions on the primacy of the so-called “Self” or “substantial” literature, novel, “literature of tomorrow”, old and new literary languages. and other issues. Many of the famous Western Armenian writers and journalists of the time participated in the discussions. One of the most active was Yeghia Temirchipashyan, a poet, novelist, philosopher, and editor, whose name appeared in almost all publications. The reason, in particular, due to the phenomenon of literary generational change at the threshold of the new century, was the intolerant attitude towards the elders or previous authorities, to which the elders had to counter with valid objections. In that sense, the beginning of 1893 was not very favorable for Ye. Temirchipashyan. In March, a great debate was provoked with him on the question of the literature of “self”. The debate started with an editorial titled “self” of the “Hayrenik” newspaper of K. Polis, the author of which was the editor Arpiar Arpiaryan. For Arpiaryan, who stands for realist literature, personal or “self” literature was, of course, unacceptable, and he accused the writers of that direction of “selfishness”. Ye. Temirchipashyan answers Arpiaryan’s article with an analytical writing “Development”, showing that the mentioned direction is not new, has much deeper historical roots and has experienced a new development in the present century, starting with Goethe. His conclusion was that, “It is by looking into oneself that one can learn to look into someone else.”

Yeghia Temirchipashyan was once again one of the main targets in the debate about the “literature of tomorrow” that raged at the end of the century. Answering the new article writers /A. Antonyan, Hovh. Gazanchyan, Art. Harutyunyan and others/, in the article titled “Literature”, he urged not to distort reality, “because a correct and fair assessment of the writer’s activity is, if not necessary, then at least an important condition”.

Ներածություն

XIX դարավերջին արևմտահայ գրական կյանքը բնորոշվում էր մի շարք աղմկահարույց բանավեճերով: Գրական, գիտական և լրագրողական միտքը մոտեցող XX դարի Նոր ակնկալիքներով աշխույժ քննարկումների դուռ էր բացել, այսպես կոչված, «ես»-ի կամ «ենթակայական» գրականության, Նորավեպի, «վաղուհան գրականության», հին ու Նոր գրական լեզուների առաջնայնության և այլ հիմնահարցերի շուրջ: Բանավեճերին մասնակցում էին ժամանակի արևմտահայ ճանաչված գրողներից ու լրագրողներից շատերը: Ամենաակտիվներից մեկը բանաստեղծ, արձակագիր, իմաստասեր, խմբագիր Եղիա Տեմիրճիպաշյանն էր, ում անունը հնչում էր գրեթե բոլոր հրապարա-

կումներում: Պատճառը, մասնավորապես, նոր դարի շեմին գրական սերնդափոխության երևույթով պայմանավորված, ավագների կամ նախկին հեղինակությունների նկատմամբ դրսևորվող անհանդուրժողական վերաբերմունքն էր, որին ավագները ստիպված էին հակադարձել հիմնավոր առարկություններով:

Նշված խնդիրներին մեր գրականագիտությունը մինչ այժմ չի անդրադարձել անհրաժեշտ չափով: Հետևապես և այդ ամենի հետազոտությունն ունի որոշակի գիտական հետաքրքրություն և արդիական նշանակություն:

«Ինքն իր մեջ նայելով է՝ որ մարդս ուրիշին մեջ նայիլ կ'ուսանի»:

1893-ի սկիզբը այնքան էլ բարենպաստ չէր եղիա Տեմիրճիպաշյանի համար: Մարտ ամսին մեծ բանավեճ էր հրահրվել Նրա հետ՝ այսպես կոչված, «ես»-ի կամ «ենթակայական» գրականության հարցի շուրջ: Բանավեճն սկսվել էր հենց «ես»-ը՝ վերնագիրը կրող մի հրապարակմամբ, որը լույս էր տեսել Կ. Պոլսի «Հայրենիք» օրաթերթում՝ որպես խմբագրական, հեղինակը թերթի խմբագիր Արփիար Արփիարյանն էր: «Ահա մօտ 20-25 տարի է որ նորածիլ գրականութեան մը առաջին երախայրիքին հետ նորածիլ ախտի մը առաջին նշաններն ալ երևան եկան: Պայրըն իր վշտերն էր երգած, Միսէ սրտին վերքերը մերկացուցած էր, ուրեմն մեր Պայրըններն ու Միսէներն ալ պետք էր իմացընէին ժողովրդին թէ առտուն ի՞նչ կը խմեն, կա՞թ թէ խահուէ՛», ակնհայտ երգիծա-հեգնական ոճով հայտարարում էր Արփի. Արփիարյանը /Արփիարեան ա, 1893, էջ 1/: Անշուշտ, նման վերաբերմունքի հիմքը սոսկ անձնական նախասիրությունները չէին, այլ ավելի խորքային՝ գրողի և գրականության եռության, ստեղծագործական տարբեր մեթոդների պայքարի արտահայտություն: Իրապաշտական /ռեալիստական/ գրականության դիրքերից հանդես եկող Արփի. Արփիարյանի համար, իհարկե, վիպապաշտական /ռոմանտիկ/, անձնական, ենթակայական կամ «ես»-ի գրականությունը մերժելի էր սկզբունքորեն: Ահա թե ինչու, Նա շեշտում էր, որ «Այդ նոր գրողները – այն ժամանակի նոր գրողները – գաղափարէ, ո՛ր և է սկզբունքէ առաջ իրենց «ես»-ը ուզեցին ծանօթացնել հայ ժողովրդին...»: Ավելին՝ Նա պնդում էր, որ այդ գրողներն ամբողջ քառորդ դար շարունակեցին իրենց այդ ջանքերը, առանց ուշադրություն դարձնելու, որ ընթերցողներից շատերն էլ շարունակում են «նողկանք զգալ այդ տարօրինակ եսամոլութեան

հանդեպ»: Ըստ Արփ. Արփիարյանի, այդ «ախտը» վարակել էր Նաև Նոր սերնդի գրողներին, այն աստիճան, որ «թունաւորումը սկսած էր գրողներու արեան մէջ մտնել», տարածվել «գաւառներն ալ»: Հանուն արդարության, Նա ընդունում էր, որ այդ «թեթեւամտութեան օրինակները» կան Նաև Եվրոպայի մեջ՝ ընդգծելով միաժամանակ, թէ այնտեղ ևս «զայրոյթ մը կը տիրէ այս կարգի գրողներու նկատմամբ»: Որպէս հոգվածի **Բարոյական**, Արփ. Արփիարյանը չափավորության կոչ էր անում, հորդորելով իր հիշատակած ուղղության գրողներին «օրինակ առնել մեծ անձնաւորութիւններէ համեստութեան մասին» /Նույն տեղում, էջ 1/:

Կարևոր է նկատել, որ «Ես»ը՝ գրության առիթը, ըստ էության, Եղիա Տեմիրճիպաշյանի օրեր առաջ «Մասիս»-ում հրապարակած «Վերլուծում» /Տեմիրճիպաշեան ա, 1893/ հոդվածն էր, որը, ինչպէս նշում է Եղիան իր մեկ այլ հրապարակման տողատակի ծանոթագրության մեջ, ինքը գրել էր «ոչ իբրեւ յօդուած», այլ պարզապէս բացատրելու համար «անգործութիւն» բառն՝ որ ինձ համար գործածուած էր» /Տեմիրճիպաշեան բ, 1893, էջ 146/: Իսկ «մեղադրանքը» Գր. Չոհրապինն էր, որ արտահայտել էր իր խմբագրած «Մասիս»-ում հրապարակած անվերնագիր մի կարճառոտ գրության մեջ, որով խոստովանում էր, թէ անհանգստանալով Եղիա Տեմիրճիպաշյանի շուրջ մեկ տարի շարունակվող մեկուսացումից, գնացել էր Նրա տուն պատճառն իմանալու: «Տարի մը կայ որ Եղիա Տեմիրճիպաշեան սրդողած էր ամենուս հետ, մարդոց ու Աստուծոյ դէմ,- գրում էր Նա,- իր շուրջը եռացող գրական գործունեութիւնը՝ այս զարտուղութեան ոգին անգործութեան, իր բառով, գործատեցութեան տարած էր»: Ահա թէ ինչու, շարունակում է Գր. Չոհրապը, «Գացինք գտանք զինքը, գտանք իր մոլորուած ակնարկը, իր սեւեռած միտքը, իր ժխտական իմաստասիրութիւնը...»: Նա անկեղծորեն խոստովանում է Նաև, թէ «Խօսեցանք, վիճեցինք ու կռուեցանք, ինչպէս կը պատահի միշտ երկուստեք յամառ մարդերու մէջ ու այդ օրէն միտքս դրի վրեժ լուծել իրմէ, իր իմաստասիրութենէ, իր խուսափող, պահուղտող, սրդողող մարդու քմահաճոյքներէն» /Չոհրապ Գր., 1893, էջ 100/: Ե. Տեմիրճիպաշյանը որոշել էր պատասխանել՝ ընդհանրապէս իր էության ու հայացքների նկատմամբ եղած թյուր ու սխալ պատկերացումները ցրելու համար: Եվ ընդամենը երկու շաբաթ անց՝ «Մասիս»-ի մարտի 6-ի համարում տպագրում է արդեն հինգ մասանոց իր վերոհիշյալ բավականին ծա-

վալուն պատասխան հողվածը՝ «Վերլուծում» խորագրով: Նախ հաստատելով Գր. Չոհրապի այցը իր տուն, ընդ որում ոչ թե մեկ, այլ «երեք անգամ», և այն էլ «Մասիս» շաբաթաթերթին իր աշխատակցությանը խնդրելու համար», նա դառնությամբ արձանագրում է, թե «Մասիս»-ի խմբագրապետը տարի է մ'ի վեր իմ «գործունեությանս դադար», կամ մեկ բառով, բառերուն ամենեն ժխտականով, իմ անգործությանս ինձ կը կշտամբե»: Ահա թե ինչու, որոշել է անձամբ տալ իր «անգործության» վերլուծությունը, բայց ոչ թե «պարտք մը կատարելու», այլ «արդի մարդուն յատուկ իմացական պետք մը լեցնելու համար»: Ընդ որում այստեղ ևս հարկ է համարում հենց հողվածի սկզբում անդադառնալ «անձնականության» խնդրին, զգուշացնելով, որ «Վերլուծմանս առարկայն երբ իմ անձս կամ իմ կեանքս է, հաճոյքն ինձ համար կրկին է»: Քանզի՞ ինչպէս ընդգծում է Եղիան, «Ո՞չ ապաքէն վերլուծումը քայքայում է. և ո՞չ ապաքէն քայքայումս իմ հոգիս անձկագոյն տեսչն և իմ մտքիս մեծագոյն պետքն է. և ո՞չ ապաքէն վերլուծելի ծանօթ առարկայից մէջ ինձ ամենեն ծանօթն իմ անձս է, որ բազում առարկայից վրայ բազմայօդութեան առաւելութիւնն ունի, շահեկանութեան առաւելութիւնը լռելեայն իմացուելով» /Տեմիրճիպաշեան ա, 1893, էջ 136/:

Կարևոր է, սակայն, նշել, որ Ե. Տեմիրճիպաշեանի առարկություններն ու վերլուծությունները, այնուամենայնիվ, իր լավ բարեկամ Գրիգոր Չոհրապի համար կամ, առավել ևս, Գր. Չոհրապի դեմ չէին: Եվ դա հողվածի վերջում խոստովանում է նաև Եղիան. «Եւ միթէ այսքան բան Ձեզի՞ դեմ գրեցի. իմ «անգործութիւնս» Ձե՞զ համար վերլուծեցի», հարցնում է նա և ինքն էլ պատասխանում «Ո՞չ, այլ անո՞նց համար, որոնք չը գիտեն թէ **բառերուն նշանակությունն անձանց համեմատ կը փոխուի**, որպէս փոխուած է դարուց հետ /ընդգծումը մերն է - Պ. Դ./» /Լույս տեղում, էջ 141/:

Արփ. Արփիարյանի «Ես»ը՝ հողվածին մեկ շաբաթ անց Եղիան պատասխանում է «Չարգացումս «Եսի» վերլուծական գրությամբ՝ խոստովանելով, որ «...քառորդ դարէ մ'ի վեր «աննման յամառութեամբ» ենթակայական գրականութիւն ընողն» ինքն է, սակայն կարող է հաստատել, թե այդ գրականությունը երբևէ «նողկանք չէ պատճառած ո՛չ Հայոց, ո՛չ Եւրոպացւոց մէջ»: Մանավանդ դա հավաստում էր նաև ընդդիմախօսը, արձանագրելով, թե «Ժողովուրդն «համբերութեամբ մտիկ է ըրեր» ենթակայական կամ եսապատում գրագետներ-

րուն» / Տեմիրճիպաշեան բ, 1893, էջ 146/: Ե. Տեմիրճիպաշեանի փաստարկները, սակայն, ավելի խոր պատմական հիմքեր ունենին: «Գերմանական մկրտութեամբ այդ «ենթակայական» գրականութիւնն հին է – գրականութեան չափ», և նույնիսկ ավելին՝ «աշխարհիս չափ», գրում է նա, որը, սակայն, ներկա դարում «սկսեալ Կեօթէն», անհամեմատ զարգացում է ապրել՝ գիտական նորագոյն վերլուծությունների և հայտնագործությունների, մարդու ինքնաճանաչման խորացմանը համընթաց: «Որքան խոր իջան Լիպզ Անգլիացին ուղեղին անդնոց մէջ եւ Վունդտ Գերմանացին՝ բովանդակ մարդկային բնախօսութեան ալուօր մէջ,- գրում է Եղիան,- ա՛յնքան կարկառ ու փայլ, այնքան ներգործութիւն ու խորութիւն ստացաւ ենթակայական գրականութիւնն»: «Ոչ, «տիւմար և աներես» գրականութիւն չէ ա՛յն, որ գրողն իր «ես»ն ի տես կը դնէ, իր տառապանքն՝ իր յոյսերն և իր տարակոյսները կը յայտնէ,- համոզված էր նա, քանզի,- իննետասներորդ դարու մարդն, այո՛, իր ներսն այնքան – եթէ ոչ անելի – կ’ապրի քան դուրսն»: Եվ իր ասելիքը տեղ հասցնելու համար դիմում է նույնիսկ հրաշալի պատկերով համեմատության. «... հոգեկան ներքին պատերազմաց Իլիականը տարբե՛ր կերպով շահեկան է քան միւս այն հին յունական «Իլիական»ն՝ ուր բանակ բանակի կը բաղխի: Սորա մէջ Աքիլլէս կը տիրէ, դորա մէջ «Ես». Եւ «Ես»ն առանել՝ իրական է քան Աքիլլէս»: Նրա տեսական հաստատումը այս դեպքում ևս աֆորիստիկ ձևակերպում է ստանում «Ինքն իր մէջ նայելով է՝ որ մարդս ուրիշին մէջ նայիլ կ’ուսանի» /Նույն տեղում, էջ 147/: Ուշագրավ է նաև Եղիայի այն դիտողությունը, թէ «Ես»ը յօդուածն հրատարակող օրաթերթին խմբագրութեան մէջ չը կայի՞ն մարդիկ, որոնք այս բաները գիտնային»: Ընդ որում, Փարիզում գիտության ու գեղարվեստների «քաղաքաց քաղաք»-ում եղած լինելն անգամ, «ուր ոչ միայն կը յեղեղուին՝ այլ և կը կատարուին «ներհայեցութիւն», «հոգեզննութիւն», մի բառով՝ «հոգեբանութիւն», չի կարող փրկել, եթէ տվյալ անհատը չունի խորունկ ներաշխարհային էություն: Եվ ապա՝ արդեն ակնհայտ դառնութեամբ՝ «Գրիչն ինչո՞ւ գրագետը չառնէ՛ր, երբ խնդիրը գրականութեան վրայ է, երբ նոր սերնդեան վրայ շատ ներգործած և գրականութիւնն ի՞նչ ըլլալը շատերուն սորվեցուցած գրողի մը վրայ է խնդիրը»: Կամ «Հայ ժողովրդեան գրական ճաշակն ըստ եւրոպականին կրթել յաւակնող անձինք՝ ներքին էջերուս առթիւ ի՞նչպէս թոյլ կուտան որ «նողկանք» գոյականը, «տիւմար» ածականն և «աներեսաբար» մակբայը գործա-

ծուի այն թերթին մեջ, զոր ժողովուրդին սիրցնելու ոչ նուազ սատարեցի ես ալ...»: Վերջապես՝ «Կը զգամ որ կը դառնանա՛յ հոգիս», - գրեթե հուսահատ բացականչում է Եղիան, թվարկելով իրեն հասցեագրվող մեղադրանքները ժխտող իրողությունները. «... կեանքս չը ծածկելով և միտքս սփռելով մասնաւոր իրատարակութեանց՝ օրագրաց ու հանդիսից մեջ, գրեթե անձնուէր ծառայութիւն մը մատուցած եմ ազգիս քառորդ դար մը շարունակ. ո՛չ ոք կրնայ ցոյց տալ մէկ մ'որու գրկանք ըրած ըլլամ, մինչ ես մէկէն աւելի մարդիկ կրնամ ցոյց տալ՝ որոնց յաւետ կամ նուազ կարեւոր ծառայութիւններ մատուցած եմ: Արդ, ես զիս արժանի կը զգամ Հայ ժողովրդեան սիրոյն ու յարգանաց», եզրափակում է Եղիան /Խոյն տեղում, էջ 147-148/:

Խնդիրը, սակայն, դրանով ևս չի ավարտվում: Բանավեճը նոր թափ է հավաքում: Ե. Տեմիրճիպաշյանի «Չարգացումն «Ես»ին» հոդվածի տպագրութիւնից ընդամենը մի քանի օր անց Արփի. Արփիարյանը «Հայրենիք»-ի իր Առաջնորդողում /Արփիարեան բ, 1893, էջ 1/ հանդես է գալիս բավական սուր որակումներ պարունակող պատասխան հերքումներով: «Հայրենիքի այն յօդուածը որուն վերնագիրն էր «Ես»ը, ո՛չ մէկ մասնաւոր անհատի ուղղուած էր, - գրում է նա, - այլ գրուած էր ամեն անոնց համար որք յաւակնութիւն ունին թէ իրենց անհատական փոքրիկ գործերը կրնան շահագրգռական ըլլալ ընդհանրութեան»: Ապա՝ արդէն ուղղակիորէն դիմելով Եղիային, հայտարարում է, թէ «Դուն, արդարացնելով անգամ մը եւս «սիրտը դող»ի առածը, կուգաս պատասխանել այդ յօդուածին իբր պետ «Ես»ի դպրոցին»: Արփիարյանը վիրավորվել էր, որ Եղիան իր գրութեան մեջ, ապա նաև «Բերանացի», գրագետ չէր համարել իրեն: Ու թեև հերքում էր իր վիրավորվածութեան փաստը, բայց դա որոշակիորէն պարզ էր դառնում նրա այն տողերից, թէ «Այն օրէն ի վեր որ սկսած եմ գրել միշտ յայտարարած եմ, քանիցս քեզ ալ, թէ ես գրագիտութիւն ընելու համար հրապարակ չեմ իջած, վասն զի գրագետ չեմ: Շատ պարզօրէն գրող մըն եմ...»: Ապա անցնելով արդէն հեգնական ոճին, ազդարարում էր, թէ ինքը գրագետ չի համարում իրեն, որովհետև ժողովրդի այն դասակարգը, որի համար գրում է, «ա՛յն ալ գրագետ չէ, ա՛յն ալ գրագիտութեան չը հասկնար. բայց մենք, տգետ ժողովուրդ ու ես որ անոնցմէ եմ, իրար կը հասկնանք»: Բայց նաև չի հասկանում, թէ Եղիան ինչո՞ւ է ուզում, որ միայն գրագետները պատասխանեն իրեն, կամ գուցէ անարժան է համարում, որ «խեղճ բազմութիւնն ալ իր կարծիքը յայտնելու

համարձակութիւնն ունենայ»: Այդ դեպքում, սակայն, տարակուսում է նա, ինչպե՞ս է որ «խոնարհութիւն» է ունենում «անգրագետի մը պատասխանելու»: Եվ քանի որ, ըստ Արփիարյանի, Եղիայի հոդվածը գրված էր «այնքան բարձր լեզուով մը որ բոլորովին անհասկնալի» էր իր և իր նման «անգրագետների» համար, «ո՛ր եւ է ազդեցութիւն» չի ունեցել իրենց վրա: Նա նաև առաջարկում է «ուրիշ յօդուածով մը մեկնել» իրենց համար «անհասկնալի» մի շարք կետեր, որոնք վերաբերում էին Սողոմոն Իմաստունից ու Յոբ Երանելուց մինչև Գյոթե, Բողլեր և արդի եվրոպական գրականության բազմաթիվ այլ մեծերի հետ Եղիա Տեմիրճիպաշյանի՝ որպէս գրագետի, համեմատական առնչություններին: «Որչափ որ ալ տգէտ եմ,- արդէն բացահայտ հեղանակի անցնելով գրում է Արփիարյանը,- բայց այդ մատենագիրներէն մեկ քանին քիչ շատ ծանօթ եմ ինծի եւ սակայն չկրցի ըմբռնել թէ ի՞նչ համեմատութիւն կայ ընդ մէջ անոնց գրածներուն որք մարդկութեան փառքը կը կազմեն եւ քու այն գրածներուդ որոնցմով մեզ կը հաղորդես թէ՛ «...միայն դուն ես որ Կեդրոնական վարժարանին մէջ առաջ ծափահարուեր ես»: Միաժամանակ խոստանում է՝ մինչև այդ հարցերին Ե. Տեմիրճիպաշյանի պատասխանելը, «ուրիշ յօդուածով մը» բացատրել, որ այն, ինչ նա կոչում է «ենթակայական գրականութիւն», «ներհայեցութիւն», «հոգեզննութիւն», իրեն էլ «բոլորովին անծանօթ չէ»: «Կը կարծեմ նաեւ թէ այդ բոլոր բառերը ամփոփուած ըլլալու են նախնեաց կտորով մէկ վճիռին մէջ որ թէ՛ կեանքի եւ թէ՛ գրականութեան մեծ առաջնորդն է. համբաւաւոր «ծանի՛ր գքեզ»ն է այդ,- գրում է Արփիարյանը՝ իր դիտարկումներն ավարտելով Եղիային ուղղված բավական խիստ մեղադրական նոտայով:- Իմաստութեան այդ վճիռը, Եղիա՛, թշնամի է, հաւատա ինծի, անձնագովութեան հետ, որուն մէջ կը կայանայ քեզի համար «գրագետ» ըլլալու արուեստը» /Նույն տեղում, էջ 1/:

Եվ իրոք, խոստման համաձայն, երկու օր անց Արփ. Արփիարյանը հրապարակում է «Կեդժաւոր գրողները» վերլուծական հոդվածը /Արփիարեան գ, 1893, էջ 1/, որը շատ ավելի սուր որակումներ էր պարունակում Ե. Տեմիրճիպաշյանի հասցեին: «Այլ ժամանակը չէ՞ հասած որ կեդժաւոր գրականութեան մը հետքերը չը ջնջուին,- հայտարարում է նա:- Երկար ատենէ ի վեր գործով կը քարոզուի թէ ով որ իր անձը կը փառաբանէ՝ թէ՛ գեղեցիկ և թէ՛ հանրութեան օգտակար գրականութիւն ըրած կ'ըլլայ»: Ավելին՝ արդէն որոշակիորեն ոչ միայն

ակնարկելով Եղիա Տեմիրճիպաշյանին, այլև մեջբերելով նրա խոսքերը, սարկազմով գրում է, թե «Մնապարծության գրական դպրոց մը հիմնելու հետամուտ եղողները հիմա ալ կը համարձակին հռչակել թէ իրենք զիրենք «արժանի կը զգան հայ ժողովրդին սիրոյն ու յարգանաց»։ Մեղադրելով Եղիային ու նրա նման «անձնական» լարը զարգացնող գրողներին՝ ոչ միայն մայրաքաղաքի, այլև գավառների «մեր խեղճ պատանեկութիւնն ու երիտասարդութիւնը» ապականելու մեջ, որոնցից շատերը «գլորուեցան ասոնց շնորհիւ այն կորուստի անդունդն որ «գոհացում» կը կոչուի», նա գտնում է, որ իրականում գրականության ճշմարիտ ուղիով ընթանում և նոր սերնդին առաջնորդում են նրանք, որոնք «թերեւս իրենց «Ես»ին գիտակցութիւնն իսկ չունին, բայց ահա կը տեսնուի թէ այդ «Ես»ը հանրութեան «Ես»ն է», այլ խոսքով՝ նրանք, որոնց գրքերում «սիրտն ու զգացումները կ'երեւին բայց անձը կ'աներեւութանայ»։ «Մեծ հանճարներէն ոմանք իրենց կենսագրութիւնը գրած են, բայց անկեղծութեան այնպիսի շեշտով մը որմէ կը զգանք թէ հեղինակը զոհողութիւն ըրած է պատմելով իր կեանքը», հողվածի ավարտին գրում է Արփիարյանը՝ հույս հայտնելով, որ «Եթէ մեր «ենթակայական, ներհայեցական, հոգեզննական» գրականութիւն ընողներն ալ» հետևեին նրանց օրինակին, «գէթ իրենց անկեղծութիւնը ցոյց կուտային» /Լույն տեղում, էջ 1/:

«Գրամարտ»՝ բանավեճ «վաղուան գրականութեան» շուրջ

Դարավերջին Կ. Պոլսի մամուլում բուռն բանավեճեր էին բորբոքվել նաև գրականության նորոգության, գրական սերնդափոխության, այսպես կոչված, հների ու նորերի, «վաղուան գրականութեան» շուրջ։ Հատկանշական է, սակայն, որ նորերի կողմից հրահրվող այդ բանավեճերում մեծագույն թիրախներից մեկը դարձյալ Եղիա Տեմիրճիպաշյանն էր։ Առաջին զանգը հնչեցնում է Արամ Անտոնյանը «Մասիս»-ում հրապարակած «Բաց նամակ»-ով։ Ընդ որում, շաբաթաթերթի խմբագրությունը Ծանոթագրությամբ նախապես հայտնում էր իր չեզոքությունը, նշելով, որ «խմբագրութեան կողմէ նկատողութեան չեն առնուի յայտնուած համոզումներուն խմբագրութեան ունեցած համոզումներուն հետ հաշտ ըլլալը կամ ոչ»։ Միաժամանակ, հրավիրում էր «մեծանուն գրագետին որպէսզի ինքը՝ իրեն դէմ եղած բոլոր առարկութիւններուն պատասխանէ» /Անտոնեան, 1899, էջ 262/:

Ա. Անտոնյանը նամակն սկսում էր Եղիային ուղղված... գովասա-

Նաև կան գնահատականներով: «Հիանալի սթիլիսթ մըն էք. բանաստեղծ մը՝ բառին ամենէն լայն առումով, ու միանգամայն գրչի վարպետ մը»: Եվ ապա՝ «Համբաւ մը ունիք՝ որուն ոչ ոք հասած է մեր մէջ. Նոյն իսկ ձեզմէ շա՛տ անելի արժանաւորները»: Նշում է, որ ազգը պարզապէս «Եղիա» է կոչում Նրան՝ «Եւ ատիկա մեծ պատիւ մըն է ինքնին, գիտցողին համար անշուշտ»: Ամեն մարդ գիտէ Նրա անունը, հետևողներ ունի, որոնք փորձում են շարունակել Նրա գործը՝ «թէեւ վազել ուզող կրիայի մը ծիծաղելիութեամբ»: Ի վերջո, եզրակացնելով, թէ «ՄԵկ խօսքով, մեր միջավայրին համար կը բաւէ վարպետ մը համարուելու համար»:

Նման նախաբանից հետո, սակայն, հետևում են Ե. Տեմիրճիպաշյան մարդուն, գրողին, խմբագրին, ազգային ու հանրային երկարամյա գործչին իր պատվանդանից իջեցնելու, պախարակելու տողերն ու էջերը: «Ասոնք ձեր լաւ կողմերն են,- գրում է Ա. Անտոնյանը,- բայց ունիք թերութիւններ ալ, որոնք ձեր բնաւորության տարրերը ըլլալու աստիճան, արմատացած են մեջերսիդ»: Իսկ որո՞նք էին Ա. Անտոնյանի նշած Եղիայի թերութիւնները, կամ «գէշ կողմերն»: Նախ՝ ինքնագովութիւնն ու սնապարծութիւնը, երևակայական թշնամիների փնտրտուքը, որով կարող էր համարվել «մեր ամենէն ալ Տօն Քիջօթ գրագետն», ապա նաև՝ նախանձոտութիւնը, որը, սակայն, «այն նախանձներէն չէ՝ որոնք առաջդիմելու կը նպաստեն...», այլ, հակառակը, քանզի « կ'ուզէք գրող մը մնալ, որուն առաջնութիւնը հռչակովի միշտ, եւ ասիկա է պատճառը, որ ամէն գրող թշնամի նկատած էք ձեզի», վարժված է, որ իր խոսքերը «միշտ իբր պատգամ մը ընդունուած» լինեն: Ա. Անտոնյանը մեղադրում է Եղիային իրեն «Գրականութեան մէջ մարտիրոս մը կարծեցնել» տալու, «միամիտներուն համար»՝ ինքնասպանության դերասանական փորձերով, միշտ որպէս «յաւերժական փիւնիկ մը» վերածնվելու հնարամտության և բազմաթիվ այլ «մեղքերի» մէջ... Այդ ամենը փորձում է հիմնավորել մի քանի օրինակներով՝ ակնկալելով նաև Ե. Տեմիրճիպաշյանի համապատասխան բացատրութիւնները՝ իր ու «գրականութեան շահերուն կրկին տեսակետներով», քանզի, ինչպէս նշում է նա՝ «Միշտ հետաքրքրական պիտի ըլլային ձեր առարկութիւնները, մանաւանդ մեզի, նորերուն համար, որովհետեւ ըլլանք կռող կամ գրող, վաղը միւս օր, հակառակ ձեր, ու թերեւս մեր ալ փափագին, մեզի պիտի վիճակի, մեզմէ ետքիներուն զձեզ ներկայացնելը» /Նոյն տեղում, էջ 262-264/:

Բնականաբար, Ե. Տեմիրճիպաշյանի պատասխանը չի ուշա-
նում: «Մասիս»-ի հաջորդ իսկ համարում այն լույս է տեսնում «Գրա-
մարտ» խորհրդանշական վերնագրով: Իր երիտասարդ գրչակցին
դիմելով «տողա՛ս» փաղաքշական բառով, Նա Նախ Նկատում է, թե
«Այդ ոճով եւ այդ ոգով գրուած նամակի մը ո եւ է ոք պարտական
չը համարիր ինքզինքը պատասխանելու...», սակայն «Ներողամտու-
թեան սկզբունքն», որին, այլ սկզբունքների հետ, հետևում է ինքը՝ «որ-
քան հնար է մարդկօրէն», պարտավորեցնում է իրեն պատասխանել
այդ «հրապարակային թուղթին», հուսալով, որ հեղինակն այսուհետ
«աւելի ծանր լեզուով եւ առաւել արդարասէր ոգով» կգրի իր «գէթ
հրապարակային նամակները»: Եվ ապա՝ խոստանում է «հանրային
Նկարագիր ու շահեկանութիւն մը» տալ իր հրապարակմանը՝ «որ-
պէսզի չը տրտնջան ընթերցողք՝ ինչպէս որ Ձեր գրութեան առթիւ՝
թէ կարի յո՛ժ անձնական է այս գրուածը» /Տեմիրճիպաշյան, 1899, էջ
300/: Այնուհետև անցնելով որևէ գրողի «գրական արժանիքի» գնա-
հատության «Բաց նամակ»-ում արծարծված հարցին, Եղիան մի յու-
րովի «մելամաղձոտ բաղդատութիւն» է անում «Երոպական գրա-
կանութիւններէն միոյն ու մեր հայ գրականութեան միջև», ի վերջո,
եզրակացնելով, որ եվրոպական գրողն ամենևին էլ առավել չէ հայ
գրողից, խնդիրը միայն անձերի և գրական միջավայրի մեջ է: Ընդգծե-
լով եվրոպական երկրների գրական բարենպաստ միջավայրերի նշա-
նակությունը, Նա նշում է՝ «Ո՞վ կ'ըսէ թէ մեր գրողներէն շատեր Նոյն
գործունեութիւնը չը պիտի ունենային Նոյն միջավայրին մէջ»: Ավելին՝
«Ես մերիւնէն ուշիմ տարրի չը հանդիպեցայ Եւրոպա ուղեւորութիւն-
ներու մէջ,- գրում է Նա,- ուստի միեւնոյն պայմաններուն մէջ մերոնք
քան Եւրոպացիներն ու Ամերիկացիներն ընդարձակագոյն ունենա-
յին թերեւս գործունեութիւն» /Նոյն տեղում էջ 301/: Մինչդեռ, ցավով
արձանագրելով, թե «Քանի՜ փոքր ու խոպան» է Հայոց գրական աշ-
խարհը, «որքա՛ն ցանցառ ու ցամաք՝ Հայ մտքին արտադրութիւնք»,
«մեր գրական լեզուն դեռ որքա՛ն աղքատ ու ջլատ...», ստիպված է
հայտարարել, թե «այսօր, չը գիտեմ ուրիշներն, այլ ես կ'ամէնամ գրե-
թէ ինքզինքս **գրագէտ** համարելու»: Այդուհանդերձ, շուրջ քառորդ դա-
րի իր գրական փորձառությունը վկայակոչելով, Եղիան համոզված է,
թե «գնահատումը գործունեութեան եթէ ոչ անհրաժեշտ, այլ գոնէ մեծ
պայման մըն է»: Ահա թե ինչու, անցած տասնամյակներին առաջիննե-
րից մեկը հենց ինքն է ջանացել խրախուսել հանդես եկած ցանկացած

օժտված գրողի, գնահատել ամեն մի լավագույն գործ: Եվ «քանինե՛ր շնորհակալիք» են հայտնել իրեն՝ «գիրենք լաւագոյնին» առաջնորդած լինելու համար: Եվ «փոխադարձաբար քանիօ՞ն պարտիմ ես ալ իմ գնահատիչներու, իմ քննադատներու», այս դէպքում փակագծում ընդգծելով, որ «դատող ու գնահատող՝ աւելորդ է ըսել՝ կը միանան «քննադատ»ին մէջ»: Ուշագրավ է, սակայն, որ ինչպէս այլ տեղերում, այստեղ ևս Եղիայի խոսքին Ծանոթագրութեամբ միջամտում է Նրա ես-երկից մեկը՝ Ճին Հակոբը, յուրովի ինչեցնելով արդարութեան ծայնը՝ «խոստովանե՛, Գրասե՛ր,- ասում է Նա,- որ ամենէն պերճախօս հատուածներդ թշնամեաց կարկուտին ներքեւ արտադրած ես եւ ամենէն ներշնչեալ քերթուածներուդ Մուսան Տառապանքն եղած է» /Նույն տեղում, էջ 301-302/: Եվ ահա, իր ու իր վաստակի գնահատութեանը սույն Նամակով միացել է Նաև Արամ Անտոնյանը: Սակայն, Նրա գովասանական գնահատականներից շոյվելու փոխարեն, Նա ընդգծում է դրանցում ցայտունորեն նկատելի «հակասականութիւնն»: «Գրողը՝ գիտք՝ ամենէն ազդակրական էակն է,- գրում է Եղիան,- ազդակրութիւնք կամ զգայութիւնք մերթ իրար չէզոքացնելու կամ իրար ջնջելու երեւոյթն ունին. այլ աննկուն հոգին, երբ գրողն անով օժտուած է, կ'իշխէ ամեն զգայութեանց եւ զանոնք կ'ուղղէ, զանոնք յօգուտ ի կիր կ'արկանէ իր Նպատակին՝ որ է - կատարելագործում»: Եվ ահա, «Իբրեւ աննկուն հոգւոյ տեր,- հայտարարում է Նա,- երկիւղ չունիմ որ Ձեր գնահատման **հակասականութիւնն** /.../ իմ գրական խառնուածքիս բնականոն զարգացման վնասէ»: Հակասութիւնն այն է, նկատում է Եղիան, որ «Ձիս արժանաւորագոյններէն մին հռչակելէ յետոյ, ինծմէ «շատ աւելի արժանաւորներ» կը գտնէք»: «Ո՛հ, կը փափագէի որ ինծմէ «շա՛տ աւելի արժանաւորներ» շա՛տ ու շա՛տ ըլլային ազգին մէջ,- բացականչում է Նա,- այլ Ձեր բացատրութեամբ իսկ անհնար է որ ճշմարտութիւն մ'ըլլայ Ձեր այդ դատաստանը», քանզի հայտարարելով՝ «բանաստեղծ մը՝ բառին ամենէն լայն առումով», սակաւաթիւ ընտրելոց հետ անբաղդատելի դիրք մը կուտաք «Եղիային»՝ Հայ գրական աշխարհին, Հայ գրական երկնքին մէջ կրնամ ըսել»: Նա հիշեցնում է, որ ամբողջ 19-րդ դարում Ֆրանսիան ընդամենը չորս բանաստեղծ է ունեցել «բառին ամենէն լայն առումով». «Լամարտին, Հիւկօ, Միւսէ, Վեռլէն. մեծ անիրաւութիւն պիտի ընէինք՝ Միսոգալը մոռնալով: Այդ բո՛յլը՝ բովանդա՛կ դարու մը համար, եւ ամենէն մե՛ծ դարուն համար»: Նույնը Նաև Գերմանիայում: Իսկ «Գերմանիայէն ալ

անցնելով հայերուն», ևս հիշատակում է Նախ և առաջ Պետրոս Դուրյանին, հռետորական հարց հնչեցնելով, թե՝ «ո՞ր հեղինակի փառքը կրնայ գերազանցել Պետրոս Դուրեանին, ո՞ր հեղինակի անուն – թո՛ղ գրուվի – այնքան կրնայ յուզել ընթերցողն ո՛րքան այդ պաշտելի անունն»: Եվ քանի որ, իր համոզմամբ, «բառին ամենէն լայն առումով բանաստեղծ»-ին մէջ անբացատրելի՝ բան մը կայ, որ ու եւ է հզօր հեղինակի զօրութենէն անելի դիւրաւ կը փոխանցուի մարդուն եւ անելի խորապէս կը գործէ կը ներգործէ մարդուն մէջ», Ե. Տեմիրճիպաշյանը պարզապէս դիմում է իր ընդդիմախօսին, թե՝ «Հիմայ. կ'աղաչեմ, ազնիւ Աստուծան, ետ ա՛ռ այդ գովեստդ ինէ»: Ավելին՝ թախանձում է, թե «Ցորքան կենդանի եմ, գերադրական /թո՛ղ ըլլայ մեր միջավայրին համար միայն/ գովեստ մի՛ ընծայեք ինծի. **Աստուծմէ կը վախնամ: Մահուանէ յետոյ, անմահից դափնեպսակին եթէ արժանանամ, այն ժամանակ տարբեր բան է. մահկանացուն յետ մահուն կը սրբուի, կը մեծանայ. կ'աստուածանայ** /Ընդգծումը մերն է – Պ. Դ./»: Ապա և եղիան առաջարկում է «մեծարանք այժմ մեծարանաց» ընծայել միասին. Նախ և առաջ՝ «մեծերու մեծին՝ անունով եւ իրաւամբ Նահապետին, ամենէն անելի երկայնաշունչ գործեր արտադրած բարձրարժան մեր հեղինակուհւոյն ու մեր հեղինակին՝ Տիկին Տիւսաբին ու Մամուրեանին, Սիպիլին՝ նոր սերնդեան սխրագոյն Մուսային, Գրիգոր Զօհրապին՝ նոր սերնդեան ամենէն յանդուգն ու հզօր յառաջապահին»... Հատկանշական է, որ Նա չի մոռանում նշել Նաև «գաւառացի գրողներու ա՛յն փայլուն ու եռանդուն խումբին, որոնք, հեռու կեդրոնէն, մերթ ամենէն աննպաստ պայմաններու մէջ, գրեթէ քարը ճեղքելով ու մէջէն ծլելով եւ՝ անմահ Կեօթի բացատրութեամբ՝ մամուռին նման անջրդի ժայռէն իրենց սնունդը քաղելով կ'անհատանան, կ'ուռճանան, կը զօրանան. մինչեւ կազմելու չափ գրականութիւն մը գաւառական, որ չը կրնար անշուշտ դիմադրել կեդրոնական տոհմային եւ օտար համագային գրականութեանց ազդեցութեան, այլ որ կը նկրտի, այլ որ կը ցասնո՛ւ «փրփո՛ւր յարակից կը յանէ», որպէս զի իր ինքնութիւնն, իր գաւառական նկարուն նկարագիրն անայլայլ պահէ» /Լույս տեղում, էջ 402-403/:

«Գրամարտ»-ը շարունակում է՝ իր իսկ խոստովանութեամբ, այդ ինդրին մի շարք հողվածներով «գիտականօրէն բանաձեւել» ջանացած Արտաշես Հարությունյանը: Առաջին իսկ տողերից, բառի բուն իմաստով, հարձակում գործելով եղիա Տեմիրճիպաշյանի վրա, ևս

գրում է, թե գավառական գրականության բուն արժեքը հաստատելու իր ջանքերը հանդիպել են որոշակի դիմադրության: Ընդ որում, հայտնի դեմքերից «Եղիա Տեմիրճիպաշեանը միայն, ու քանի մը տարտամ վախկոտութիւններ, գտնուեցան որ ուզէին իրենց անձնական պղտոր սրտնեղութիւնը յայտնել՝ մանկական ձեւերով, ստորնաքարշ ակնարկութիւններով ու դիւցազներգական անձնագովութիւններով»: Բարեբախտաբար, գոհունակությամբ նշում է Արտ. Հարությունյանը, «խելացի մեծամասնութիւնը մեզի հետ էր», ինչը, իր կարծիքով, «ստուգի» նշանն էր այն բանի, որ հիշյալ երևույթը «ըստ ինքեան բարեգուշակ է արեւմուտքի հայերուն վաղուան գրականութեան համար» /Յարութիւնեան ա, 1899, էջ 402/: Ի վերջո, եզրակացութիւնն այն էր, թե «մեր այսօրուան բոլոր գրողները, Պոլսեցի թէ գաւառացի, միեւնոյն պայմաններուն տակ առաջ եկած են եւ,- բացառութիւնները ճանչնալով,- երբէք ճշմարիտ գրագետներ չեն՝ այլ միայն՝ *amateurներ*¹»: Պատճառն այն է, որ հայ միջավայրը, հասարակությունը դեռ ի վիճակի չէ գրագետներ «հասցնել ու ապրեցնել», նաև՝ «գնահատել գրականութիւնը՝ իբրեւ ազգի մը մտաւոր ու ընկերական զարգացման դատանի» /Նույն տեղում, էջ 406/:

«Մասիս»-ի տնօրէն-խմբագրապետ Միքայել Շամտանճյանը, թերթի նույն համարում հանդես գալով «Բացատրութիւն մը» հրապարակմամբ, նկատում է, թե բարեկամ լինելով «աւելի թարմին», «նորին, որ հինին վրայ բան մը կ'աւելցնէ», քանզի «նորին հետեւիլը շարժում մըն է դէպ ի առաջ, իսկ հինին վրայ մնալը դադար մը, որ հակառակ է բնաշրջման, զարգացման օրէնքին», միաժամանակ դեմ չէ «հների» փորձառություններից խելամոռրեն օգտվելու գաղափարին: Բանն այն է, սակայն, որ, ըստ նրա, մեր հանրությունը նման չէ այն հասարակություններին, «որոնց մէջ հինը հեղինակութիւն մը ունեցած է, իր նոր եղած ատենը...»: Հետևապես, «գոնէ վերջին մէկ դարի ընթացքին, մենք այս իմաստով հիներ չենք ունեցած», ավելի ճիշտ՝ «մեր գրականութեան հիները չեն ունեցած այն տեսակ գործունեութիւն մը, որ նորերը յետահայեաց յարգանքներու հարկադրեն եւ իրենց հետեւողներն ալ համակրութեան իրաւունք մը ունենան ներկային մէջ» /Շամտանճեան, 1899, էջ 406/: Միք. Շամտանճյանը կարծում է, որ մասնավորապես 70-80-ական թվականներին ընդամենը «գրականութեան պէս բան մը ունեցած ենք», որից հետո, որպեսզի նորը «վստահ

1 Amateur - /Ֆր./ սիրող, գրասեր:

կերպով յառաջ երթայ, պետք է միանգամ ընդ միշտ կոտորել այն ամենուն ազդեցութիւնը հանրութեան մտքին վրայէն, որոնք հինին վրայ իրենց յամառելովը կրնան դանդաղեցնող պարագաներ դառնալ Նոր գործին հակազդեցութիւնը սկսողներու համար, եթէ անոնք իրենց գլխուն ձգուին, իրենց ուզածը ընելու»: Ակնարկված «հիներու» շարքում, առաջիններից մեկը Նա դարձյալ տալիս է հենց եղիա Տեմիր-ճիպաշյանի անունը, ով «իր գրական սոսկալի գահավիժումին մէջ» անհնարին ճիգեր գործադրելով «իր հին համբաւին կառչած մնալու համար», ինչպէս Նաև շարունակելով «գրելու կերպ մը, որ բնաւ իր տեղը պետք չէր ունենալ ո եւ է օրաթերթի մը մէջ, որ ժողովրդէն կը կարդացուի», բնականաբար, չի կարող արժանանալ նրանց համակրութեանը, «որոնք կը զգան թէ զարգացումի անօթին է մեր ժողովուրդը»: Նշելով, թէ «Յարատեւ փոփոխման ենթակայ գրող մը եղած է ան, որ այսօրուան իր գրածներովը գրողի անունը կորսնցուցած է ա՛յ», Միջայել Շամտանճյանն իր դատողությունները եզրափակում է բավական կտորով դատաստանով՝ «Եղիան գրող մըն էր ժամանակաւ, բայց ոչ այսօր» /Նույն տեղում, էջ 407/: Արտաշես Հարությունյանը՝ Նոր հրապարակմամբ, շարունակում է ցավոտ հարվածների շարքը, գրելով, թէ «Տեմիրճիպաշեան պարպուած օդապարիկ մըն էր ա՛յ» /Յարութիւնեան բ, 1899, էջ 475/: Ավելին՝ «հինցած գրագետ մը, քայքայուած իմացականութիւն մըն է այսօր», որն ավելի խելացի կվարվեր, «եթէ իմաստուն լռութեան մը մէջ անաղարտ պահել ուզեր իր բարի համբաւը, որ այլեւս բզկտուած է սակայն...»: Նա Նույնիսկ զգուշացնում էր Եղիային սպառնացող «բարոյական մարդու համբաւին վնասող» վտանգի մասին՝ ծաղրական ոճով մատնանշելով վերջինիս «աղտոտ քիւսիսնորութիւն մը եւ անպատիւ միջոցներ ի գործ դնելու հերոսական քաջասրտութիւն» ունենալու իրողությունները: Ուրեմն և, ըստ Արտ. Հարությունյանի, իրավունք ունեն նրանք, որոնք Ե. Տեմիրճիպաշյան անձի և գրողի «այս անհեթեթութիւններու անիմաստութիւնները կ'ուզեն արդարացնել զինքը հիւանդ հռչակելով...»: Նա Նաև իրավունք է վերապահում ասելու, թէ «այդ տեսակ հիւանդները /.../ լաւ կ'ըլլայ որ հիւանդանոց մտնեն ու ինքզինքնին դարմանել տան՝ քան զբաղին գրչի աշխատութիւններով՝ որոնք համար չեն այլեւս»: Հոգվածագիրը Նաև ավելի հեռուն է գնում կոչ անելով, որ հրատարակութեան պատասխանատուները «ժողովուրդին չի ներկայացնեն» նրանց գրվածքները, որոնք, իր կարծիքով, այլևս «մտածուած, օգտա-

կար գրականութեան մէջ իրենց տեղը չունին» /Նույն տեղում, էջ 476/:

Օղակը աստիճանաբար սեղմվում էր առանց այդ էլ Նյարդային և հոգեկան գերլարված վիճակում գտնվող Ե. Տեմիրճիպաշյանի շուրջը: «Մեղադրանքների» սլաքները Նրան էին ուղղվում թե՛ ավագների ու երիտասարդների, թե՛ գավառացի ու պոլսեցի գրչընկերների ճամբարներից: Հովհաննես Գազանճյանն իր մի հրապարակման մէջ խոսում էր Եղիայի «գրչի մը անկումի» մասին, հաստատելով, որ Նա այլևս նման է այն անձերին, «որոնք տաղանդի գերագոյն զօրութեամբ մը» իրենց ասպարեզում «փայլուն համբաւի մը» տիրանալուց, «խանդավառ հիացման ու պաշտումի առարկայ դառնալով», հետագայում ոչ միայն չեն կարողացել պահպանել այդ համբավը, այլև «արհամարհանքի ալ առարկայ» են դարձել: Հոգվածագրի կարծիքով, ասվածի ապացույցն այն է, որ Եղիայի «գրական արտադրութիւնները օրէ օր կը տափակնան ու անհամ ըլլալու աստիճան անիմաստ կը դառնան»: Խոստովանելով, որ իրենք՝ «գաւառացիները», սկզբնապէս հիացմունք և Նույնիսկ պաշտամունք ունեին Նրա անձի ու «գեղեցիկ գրուածների» նկատմամբ, ցավով է նշում, թէ դա տևել է մինչև այն օրը, երբ «տխուր իրականութիւնը հրապարակաւ ալ հռչակելու քաջութիւնն ունեցաւ յանդուգն երիտասարդ մը - Արամ Անտոնեան» /Գազանճյան, 1899, էջ 508/: Հետահայաց վերլուծմամբ Եղիայի մի շարք անհատական, գրական ու ոճական «թերությունները» նշելուց հետո, Հովհ. Գազանճյանն անդրադառնում է Նաև ի՛ր պարագային, գրելով, թէ ընդդիմախոսների նկատմամբ անզիջողությամբ, վերջինս «Սուրհանդակ»ի մէջ ինձի դէմ ալ բաներ մը ըսել ուզեր է որոնց իմաստին ապահովապէս իրմէ զատ ոչ ոք կարող է թափանցել»: Գտնում է, որ, թերևս, իր հանցանքն այն է եղել, որ, ըստ Ե. Տեմիրճիպաշյանի, ինքը Նրան համակարծիք չի գտնվել, «թէ գաւառական գրականութիւնը չի կրնար դիմադրել միջազգային եւ օտար գրականութեան ազդեցութեան», մինչդէռ իրականում ինքը ջանացել էր «հակառակը հաստատել փափկութեամբ»: Ընթերցողներին «անլի բաները» հրամցնելու իր այդ ընթացքը շարունակելու դէպքում, հոգվածագրի կարծիքով, Եղիան «օր մը պիտի արհամարհուի ու ա՛լ էկարդացուի»՝ հիասթափեցնելով «իր ընթերցողներուն ու հիացողներուն»: Ավելին՝ «Այս ընթացքով ինքը դեպի անկում կ'երթայ եւ կը նմանի ամենէն յարգուած, սիրուած, պաշտուած մարդու մը որ ամէն կարելի ճիգ կը թափէ կորսնցնելու համար ինչ որ շահած է: Մե՛ղք...» /Նույն տեղում, էջ

509/։ Ահա թե ինչու, փափագ է հայտնում, որ «Եղիան երկայն հանգիստ մը առնէր ու ո՛չ մէկ տեղ ալ չգրէր», քանզի՝ «Մենք կը սիրէնք մեր մտքերուն վրայ պահել հին Գրասէր Ատոմին թողած հմայքը, մենք միշտ զինքը կը սիրենք տեսնել հիացման ու պաշտումի նոյն մթնոլորտին մէջ պարուրուած, համբաւի միեւնոյն բարձրութեան մէջ բարձրաթառ» եզրափակում է Հովի. Գազանճյանը /Նոյն տեղում, էջ 510/։

Ի դեպ, Եղիայի դեմ Գրամարտի ասպարեզը միայն «Մասիս»-ը չէր։ Շատերն էին նշում, որ վերջին շրջանում նա հասցրել էր գծովել գրեթէ բոլոր կարևոր լրատվամիջոցների հետ, և արդեն մինչև իսկ՝ Հովի. Գազանճյանի արտահայտությամբ՝ «իր սիրական «Բիւզանդիոն»ին հետ ալ աւրուէր է զոր անխնայ կը ծաղրէ, ինքն ալ փոխադարձաբար ծաղրուելով անկէ» /Նոյն տեղում, էջ 509/։ Եվ իրոք, այդ օրերին է հենց, որ «Բիւզանդիոն»-ը իր էջերը տրամադրում է Տոմիկոյի /Ռուտով Սամիկյան/ «Հիւանդ գրիչը» երգիծապատումին, որի գլխավոր հերոսը Ատոմյան – Եղիան էր։ Դրամատիկական մանրապատումի ոճով գրված Տոքոր – Ատոմյան այդ երկխոսության մէջ՝ արձագանքելով օրեր առաջ տպագրված բժիշկ Զոյույանի համանուն գրությանը, Տոմիկոն, ի վերջո, Տոքորի բերանով հնչեցնում է իր գլխավոր եզրակացությունը, թե բուն հիվանդը ոչ թե գրիչն է, այլ հենց ինքը՝ Ատոմյանը։ Ու որքան էլ վերջինս փորձում է պնդել, որ գրիչն իրենից «աւելի առողջ է թերեւս և պիտի տեսնէք տակաւին թէ ինչե՛ր պիտի գրեմ անով», սակայն Տոքորի դատավճիռը վերջնական էր ու անողոք՝ «Այո՛... նախ և առաջ պետք է ձեզ դարմանել...»։ Եվ Ատոմյան – Եղիային այլևս ոչինչ չի մնում, քան «տեղէն ցատկելով» ու «Ե՛ս, Ե՛ս, հիւանդը Ե՛ս... հԵ՛... դո՛ւք ալ. Տոքոր՛ր, դո՛ւք ալ... Ե՛ս, Ե՛ս, հիւանդը...» բացականչելով դուրս փախչել սենյակից /Տոմիկո, 1899, էջ 1/։

Եզրակացություն

Ամենագոր ժամանակը, իհարկե, ի վերջո, հաստատեց, որ Եղիա Տեմիրճիպաշյանի նկատմամբ դրսևորվող մեղադրանքներն անհիմն ու անարդար էին։ Տարիներ անց «Մասիս» շաբաթաթերթի խմբագիր-տնօրեն Եսովք Արմենը՝ անդրադառնալով այդ բանավեճերին և Ե. Տեմիրճիպաշյանի նկատմամբ դրսևորված վերաբերմունքին, գրում է. «Ատեն մը, առողջ և հիւանդ գրականութեան խնդիր մը յարուցուեցաւ, որով անշքացնել կ’ուզուէր կարեւորութիւնը իր արժանիքին և գործին»։ Սակայն, նրա համոզմամբ, «Այդ հարցը խնդրական

Է...»: Մասնավանդ որ «ո՛ր և է պարագայի, վեհանձն գործ չպիտի ըլլար, չնչին առարկությունով մը, քել և մոռնալ գրագետ մը, որ ամբողջ կես դարու սերունդի մը մտաւորական ամենէն փայլուն ջախը եղած է, զայն առաջնորդած Լուսաւորութեան ճամբաներուն մէջ, անոր հոգին յուզած յանկուցիչ գրիչի մը ուժեղ մոգականութիւնովը, և գրականութիւնը սիրցուցած՝ անբաղդատելի կերպով բարձր աստիճանով մը» / Ենովք Ա., 1907, էջ 579/:

Գրականության ցանկ

Արփիարյան Արփ. /**Խմբագրական/**, «Ես»ը, Կ. Պոլիս, Հայրենիք /օրաթերթ/, 1893, թիւ 413 /10 մարտ/:

Արփիարյան Արփ. /**Խմբագրական/**, Առ Եղիա Տեմիրճիպաշեան, Կ. Պոլիս, Հայրենիք /օրաթերթ/, 1893, թիւ 421 /18 մարտ/:

Արփիարեան Արփ., Կեղծաւոր գրողները, Կ. Պոլիս, Հայրենիք /օրաթերթ/, 1893, թիւ 423 /20 մարտ/:

Անտոնեան Ա., Բաց նամակ /Եղիա Տեմիրճիպաշեանին/, Կ. Պոլիս, Մասիս /կիսամսեայ հանդէս/, 1899, թիւ 8-9, էջ 262-264:

Գազանճեան Յովհ., Գրչի մը անկումը, Կ. Պոլիս, Մասիս /կիսամսեայ հանդէս/, 1899, թիւ 16-17, էջ 508-510:

Ենովք Արմէն, Գլուխս պէտք ունի ուսիդ, Կ. Պոլիս, Մասիս /շաբաթաթերթ/, 1907, թիւ 28-29, էջ 577-580:

Զօհրապ Գր., /անվերնագիր/, Կ. Պոլիս, Մասիս /շաբաթական հանդէս/, 1893, թիւ 3979, էջ 100:

Յարութիւնեան Արտ., Հայ գրագետը, Կ. Պոլիս, Մասիս /կիսամսեայ հանդէս/, 1899, թիւ 13-14, էջ 402-406:

Յարութիւնեան Արտ., Գրական դիմաստուներն /Եղիա Տեմիրճիպաշեան/, Կ. Պոլիս, Մասիս /կիսամսեայ հանդէս/, 1899, թիւ 15, էջ 473-476:

Շամտանճեան Միք., Բացատրութիւն մը, Կ. Պոլիս, Մասիս /կիսամսեայ հանդէս/, 1899, թիւ 13-14, էջ 406-407:

Տեմիրճիպաշեան Ե., Վերլուծում, Կ. Պոլիս, Մասիս /շաբաթական հանդէս/, 1893, թիւ 3981, էջ 136-141:

Տեմիրճիպաշեան Ե., Չարգացումն «Եսիւն», Կ. Պոլիս, Մասիս /շաբաթական հանդէս/, 1893, թիւ 3982, էջ 146-148:

Տեմիրճիպաշեան Ե., Գրամարտ /Առ Արամ Անտոնեան/, Կ. Պոլիս, Մասիս /կիսամսեայ հանդէս/, 1899, թիւ 10, էջ 300-303:

Տօմիսօ, Հիւանդ գրիչը, Կ. Պոլիս, Բիւզանդիոն /օրաթերթ/, 1899, թիւ 837 /15 յուլիս/:

REFERENCES

Arpiaryan Arp. /khmbagrakan/, «Es»ě /Self/, K. Polis, Hayrenik /orater/, 1893, tiv 413 /10 mart/ **(In Armenian)**.

Arpiaryan Arp. /khmbagrakan/, Ar, Yeghia Temirchipashyan /To Yeghia Temirchipashyan /, K. Polis, Hayrenik' /orater/, 1893, tiv 421 /18 mart/ **(In Armenian)**.

Arpiaryan Arp., Keghtsavor groghnerě /The hypocritical writers/, K. Polis, Hayrenik /orater/, 1893, tiv 423 /20 mart/ **(In Armenian)**.

Antonyan A., Bats' namak /Yeghia Temirchipashyanin/ /An Open Letter to Yeghia Temirchipashyan /, K. Polis, Masis /kisamsya handes/, 1899, tiv 8-9, edj 262-264 **(In Armenian)**.

Gazanchyan Hovh., Grchi me ankumě /The Fall of the Pen/, K. Polis, Masis /kisamsya handes/, 1899, tiv 16-17, edj 508-510 **(In Armenian)**.

Enovk Armen, Glukhs petk uni used /My head Needs Your Shoulder/, K. Polis, Masis /chabatater/, 1907, tiv 28-29, edj 577-580 **(In Armenian)**.

Zohrap G. /anvernagir//Untitled/, K. Polis, Masis /chabatakan handes/, 1893, tiv 3979, edj 100 **(In Armenian)**.

Harutyunyan Art., Hay gragetě /The Armenian Literate Person/, K. Polis, Masis /kisamsya handes/, 1899, tiv 13-14, edj 402-406 **(In Armenian)**.

Harutyunyan Art., Grakan dimastwerner /Yeghia Temirchipashyan/ / Literary Shadows /Yeghia Temirchipashyan /, K. Polis, Masis /kisamsya handes/, 1899, tiv 15, edj 473-476 **(In Armenian)**.

Chamtanchyan Mik., Batsatrutyun mē /An explanation/, K. Polis, Masis /kisamsya handes/, 1899, tiv 13-14, edj 406-407 **(In Armenian)**.

Temirchipashyan E., Verlutsum /Analisis/, K. Polis, Masis /chabatakan handes/, 1893, tiv 3981, edj 136-141 **(In Armenian)**.

Temirchipashyan E., Zargatsumn «yes»in /Development of one's "self"/, K. Polis, Masis /chabatakan handes/, 1893, tiv 3982, edj 146-148 **(In Armenian)**.

Temirchipashyan E., Gramart /Ar Aram Antonyan/ /Book Fight/, K. Polis, Masis /kisamsya handes/, 1899, tiv 10, edj 300-303 **(In Armenian)**.

Tomino, Hivand grichě /The Sick Pen/, K. Polis, Byzundion /orater/, 1899, tiv 837 /15 hulis/ **(In Armenian)**.

ՂԵՏՐՈՍ Հ. ԴԵՄԻՐՇՅԱՆ – Բան. գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի հայ նոր գրականության բաժնի առաջատար գիտաշխատող, Հայաստանի գրողների միության վարչության քարտու-

դար: Գիտական հետաքրքրությունները՝ դասական և ժամանակակից գրականություն: Հեղինակ է գրականագիտական 3 մենագրության, հարյուրից ավելի գրականագիտական և գրաքննադատական հոդվածների:

Петрос А. Демирчян - Докт. фил. наук, Ведущий научный сотрудник отдела армянской новой литературы Института литературы имени М. Абегиана НАН РА. Секретарь правления Союза писателей Армении. Область научных интересов: классическая и современная литература. Является автором 3-х литературоведческих монографий, более ста литературоведческих и литературно-критических статей.

PETROS H. DEMIRCHYAN: Doctor of Philological Sciences. Leading researcher of the department of New Armenian Literature of the Institute of Literature after M. Abeghyan of National Academy of Sciences of the Republic of Armenia. Deputy President of the Writers Union of Armenia. Academic interests: classical and modern literature. He is an author of three literary monographs, more than a hundred literary and literary critical articles